

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/25-3 >>**

ք. Երևան

« 7 » սեպտեմբերի 2021 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ալ ԵՎ ԱՐ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կարիքների համար բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք)**, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:



3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախազձեռնախաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

- 1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:
- 2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:
- 3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:
- 4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝  
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **18801559.88 (տասնութ միլիոն ութ հարյուր մեկ հազար հազար հինգ հարյուր հիսունինը և 88 լումա << դրամ, որից 3133593.32 (երեք միլիոն հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր ինսուներեք և 32 լումա) << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,19 (գրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 40 (քառասուն) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 30 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան  
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1  
Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900032313174  
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան



### Կապալառու

«ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ  
Նուբարաշեն 20փ. 20/1 բն6  
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ  
Հ/Հ 163548008941  
ՀՎՀՀ 00471629

Ա. Գրիգորյան  
(ստորագրություն)



Հավելված թիվ 1  
 « 7 » սեպտեմբերի 2021 թ. կնքված  
 կնքված աշխատանքների կատարման  
 թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/25-3 >> գնման պայմանագրի

Ք. Երևան, Արաբկիր վարչական շրջանի Խաչատրյան 31,33,33/1 շենքերի հիմնանորոգման համար  
 ծավալաթերթ-նախահաշիվների վերահաշվարկի և նախագծերի վերակազմման աշխատանքներ

Ծավալաթերթ-Նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
<b>Շիանարարական աշխատանքներ</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
1	Գոյություն ունեցող հենապատի բետոնե թասակի քանդում	մ <sup>3</sup>	6.6000	15.0000	99.0000
2	Նստարանների ապամոնտաժում	հատ	1.0000	2.4000	2.4000
3	Գոյություն ունեցող խաղասարքի ապամոնտաժում	հատ	1.0000	2.4000	2.4000
4	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	30.7000	2.5000	76.7500
<b>Վերանորոգման աշխատանքներ</b>					
5	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ <sup>3</sup>	71.5400	2.3000	164.5420
6	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	85.8480	4.9000	420.6552
7	Բուսահողի փոում ձեռքով	մ <sup>2</sup>	715.4000	0.3600	257.5440
8	Միզամարզերի տեղադրում /1մ2-35գրամ սերմ/	մ <sup>2</sup>	715.4000	0.2700	193.1580

9	Կապույտ ավազի շերտի իրականացում խաղահրապարակներում	մ <sup>3</sup>	8.0000	7.4400	59.5200
10	Բետոնե նստատեղերի երեսապատվող մասի սվաղում ցեմենտավազային շաղափով	մ <sup>2</sup>	7.0000	1.3900	9.7300
11	Անցքերի շաղափում բետոնե նստատեղերում L=10սմ	հատ	80.0000	0.1370	10.9600
12	Դյուբեղներ Ø8 մմ	հատ	80.0000	0.0630	5.0400
13	40x20 մմ ուղղանկյուն կտրվածքի խողովակների տեղադրում բետոնե նստատեղերի վրա /L=500մմ,40 հատ/	տն	0.0340	72.7000	2.4718
14	40x20 մմ ուղղանկյուն կտրվածքի խողովակների արժեքը	զմ	20.0000	0.7900	15.8000
15	Բետոնե նստարանների երեսապատում փայտով 50x50մմ L ընդ=126,6մ	մ <sup>2</sup>	6.3300	10.1300	64.1229
16	Փայտե չորսուների յուղաներկում 2 շերտ	մ <sup>2</sup>	25.3000	1.2700	32.1310
17	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ <sup>2</sup>	2.4000	1.1500	2.7600
18	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերի,բետոնե հիմքով	զմ	3.0000	10.6200	31.8600
19	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	230.0000	1.3500	310.5000
20	Մանրահատիկ անֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	230.0000	5.2300	1202.9000
21	Գոյություն ունեցող հենապատի բազալտե թասակի տեղադրում 530x80մմ կտրվածքի	մ <sup>2</sup>	12.00000	41.96964	503.63565
22	Գոյություն ունեցող հենապատի բետոնե թասակի իրականացում B-15 դասի բետոնից 500x100մմ կտրվածքի	մ <sup>3</sup>	4.60000	38.13556	175.42358
23	Գոյություն ունեցող հենապատի վերանորոգում գյուղական շարով 2,5մ2	մ <sup>3</sup>	1.0000	21.36192	21.36192

24	Գոյություն ունեցող շինության սվաղում ցեմենտ ավազային շաղախով	մ <sup>2</sup>	35.0000	1.39023	48.65813
*25	Արդամանների տեղադրում ամրացումով	հատ	13.0000	2.66036	34.58470
*26	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	4.0000	5.32072	21.28289
*27	Խաղասարքերի տեղադրում ամրացումով	հատ	3.0000	7.53769	22.61308
28	ABBԴ 2x6մմ2 մալուխների անցկացում վերգետնյա, ճուպանով	զմ	20.0000	1.14087	22.81732
<b>Ցարտադրյալ 1հատ</b>					
29	Բազալտե հարթ անկանոն ջարդոնե սալերի քանդում	մ <sup>2</sup>	5.0000	4.0000	20.0000
30	Բազալտե հարթ անկանոն ջարդոնե սալերի իրականացում	մ <sup>2</sup>	5.0000	10.0000	50.0000
31	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	0.0450	4.0000	0.1800
32	Ավելտրոդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.0810	3.0000	0.2430
33	Ցայտադրյալի տեղի բետոնացում B12.5 դասի բետոնով	մ <sup>3</sup>	0.0300	34.0000	1.0200
34	Ցայտադրյալի հարթակի երեսապատում բազալտե սալերով 30մմ	մ <sup>2</sup>	1.0000	11.0000	11.0000
35	Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	զմ	3.000	10.00000	30.00000
36	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7 սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	0.005	12.00000	0.05400
37	Ցայտադրյալի պատրաստում և տեղադրում մշակված գրանիտե քարից 250x250x900մմ	կ-տ	1.000	189.70000	189.70000

38	Ամրան Φ14A500c	տն	0.001360	610.30000	0.83001
39	Պողպատե թիթեղ 200x200x2մմ 0,04մ2	տն	0.000628	728.1000000	0.45725
40	Ցինկապատ թասակ Φ200մմ ,h=100մմ	հատ	1.000	12.90000	12.90000
41	Ցայտիչի տեղադրում Φ15 մմ	հատ	1.000	3.57000	3.57000
<b>Արտաքին ջրամատակարարում</b>					
42	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ <sup>3</sup>	1.25000	0.54400	0.68000
43	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողիցք	մ <sup>3</sup>	24.00000	0.44000	10.56000
44	Խրամուղու հատակի համահարթեցումով ձեռքով	մ <sup>3</sup>	1.00000	2.21900	2.21900
45	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ <sup>3</sup>	22.00000	0.07000	1.54000
46	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	22.00000	0.21200	4.66400
47	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	2.00000	0.92700	1.85400
48	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	2.00000	0.21000	0.42000
49	Խողովակաշարի անցկացում պոլիէթիլենային խողովակներից Φ15 մմ,հիդրավլիկ փորձարկումներով	գմ	27.00000	0.47000	12.69000
50	Պողպատ / պոլիէթիլեն միացություն Φ50մմ	հատ	1.00000	4.00000	4.00000
51	Պարուրակավոր արտյրե փականի տեղադրում Φ15մմ PN10/ գոյություն ունեցող հորում/-	հատ	1.00000	3.97000	3.97000
52	Միացում գոյություն ունեցող Φ15 մմ ջրագծին	տեղ	1.00000	2.43000	2.43000

53	Համակարգի լվացում, վարաքաղերցումով $\Phi 15$ մմ	կմ	0.02400	66.80000	1.60320
54	Ավելնորդ բնահողի տեղափոխում 13կմ	տն	2.25000	2.24000	5.04000
<b>Արտաքին կոյուղի</b>					
55	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/հնքնաթափերի վրա	մ <sup>3</sup>	1.10000	0.54489	0.59937
56	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողիցք	մ <sup>3</sup>	22.00000	0.44693	9.83248
57	Խրամուրու հատակի համահարթեցումով ձեռքով	մ <sup>3</sup>	1.00000	2.21912	2.21912
58	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ <sup>3</sup>	20.00000	0.07000	1.40000
59	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	20.00000	0.21000	4.20000
60	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	2.00000	0.92000	1.84000
61	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	2.00000	0.21000	0.42000
62	Խողովակաշարի անցկացում կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակներից $\Phi 50$ մմ, հիդրավլիկ փորձարկումներով	զմ	25.00000	0.59000	14.75000
63	Միացում գոյություն ունեցող $\Phi 50$ մմ կոյուղու խողովակին	տեղ	1.00000	25.60000	25.60000
64	Ավելնորդ բնահողի տեղափոխում 13կմ	տն	1.98000	2.24000	4.43520
<b>Ոռոգում</b>					
65	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում	մ <sup>3</sup>	1.00000	3.60000	3.60000

66	Բազալտե հարթ անկանոն ջարթոնե սալերի քանդում	մ <sup>2</sup>	5.00000	4.00000	20.00000
67	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.00000	3.00000	6.00000
68	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	9.00000	2.20000	19.80000
69	Բնահողի եսլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	9.00000	0.92000	8.28000
70	Բնահողի տոփանում	մ <sup>3</sup>	9.00000	0.21000	1.89000
71	Խճի շերտի պատրաստում Ցսմ հաստությամբ	մ <sup>2</sup>	8.40000	1.05000	8.82000
72	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	8.40000	4.10000	34.44000
73	Բազալտե հարթ անկանոն ջարթոնե սալերի իրականացում	մ <sup>2</sup>	5.00000	10.30000	51.50000
74	Միացում գոյություն ունեցող Փ100մմ ջրագծին	տեղ	1.00000	5.87000	5.87000
<b>Տեխնոլոգիական մաս</b>					
75	Խողովակաշարի անցկացում պողպատե էլ եռակցվող խողովակներից Փ57x3.0մմ, հղրավլիկ փորձարկումով	զմ	112.00000	2.30000	257.60000
76	Խողովակաշարի անցկացում պողպատե էլ եռակցվող խողովակներից Փ45x2.5մմ, հղրավլիկ փորձարկումով	զմ	33.00000	1.65000	54.45000
77	Խողովակաշարի անցկացում պողպատե էլ եռակցվող խողովակներից Փ40x2.5մմ, հղրավլիկ փորձարկումով	զմ	74.00000	1.50000	111.00000
78	Սողնակների տեղադրում Փ50մմ PN=1.0ՄՊա	հատ	1.00000	32.00000	32.00000
79	Ճկուն միացում Փ50մմ PN=1.0ՄՊա	հատ	1.00000	3.10000	3.10000

80	Պողպատե կցաշուրթի տեղադրում $\Phi 50$ մմ	հատ	1.00000	4.00000	4.00000
81	Ջրթող հանգույցների մոնտաժում	հատ	30.00000	4.50000	135.00000
82	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում	հատ	4.00000	5.80000	23.20000
83	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0.25760	741.00000	190.88160
84	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ	մ <sup>2</sup>	41.00000	1.10986	45.50428
85	Պողպատե խողովակների լվացում	կմ	0.23700	66.80000	15.83160
	<b>Ընդամենը</b>				<b>5284.31029</b>
	<b>Սարքավորումներ</b>				<b>550.00000</b>
	<b>Ընդամենը</b>				<b>5834.31029</b>
	<b>ԱԱՀ</b>	<b>20%</b>			<b>1166.86206</b>
	<b>Ընդամենը</b>				<b>7001.17234</b>

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ազատության 11,11ա,9ա շենքերի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ

Ծավալաթերթ-Նախահաշիվ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4.	5	6
	<b>Քանդման աշխատանքներ</b>				

1	Բետոնե հատվածների քանդում	մ <sup>3</sup>	15.50000	13.60000000	210.80000000
2	Շին աղբի հավաքում բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /այդ թվում տեղում առկա շին աղբի/	տն	55.70000	2.50000000	139.25000000
	<b>Ընդամենը</b>				<b>350.05000000</b>
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>				
3	Բուսահողի բարձում ա/հնքնաթափերի վրա	մ <sup>3</sup>	171.50000	2.00000000	343.00000000
4	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	205.80000	4.50000000	926.10000000
5	Բուսահողի փոում ձեռքով	մ <sup>2</sup>	1142.00000	0.30000000	342.60000000
6	Միզամարզերի տեղադրում /1մ2-35գրամ սերմ/	մ <sup>2</sup>	1142.00000	0.24914961	284.52885680
7	Գոյություն ունեցող բետոնե նստատեղերի վերնամասի երեսապատում տուֆե սալերով,50մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	11.00000	23.00000000	253.00000000
8	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ <sup>3</sup>	1.80000	11.60481503	20.88866705
9	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 4սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	1.44000	12.06644575	17.37568187
10	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 60մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	36.00000	5.09574114	183.44668114
11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ <sup>3</sup>	1.49000	11.60481503	17.29117439
12	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x120մմ	գմ	74.50000	3.15502716	235.04952321
13	Կապույտ ավազի շերտի իրականացում խաղաչիրապարակներում	մ <sup>3</sup>	6.00000	6.86255901	41.17535406

	Շնդամենը					2664.45593853
	Աստիճան-1					
14	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	11.00000	3.60824479		39.69069265
15	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	4.50000	1.04527504		4.70373766
16	Ավելորդ բնահողի բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	12.35000	2.81045511		34.70912055
17	B-12,5 դասի բետոնից նախապատրաստական շերտի պատրաստում	մ <sup>3</sup>	2.50000	32.10734421		80.26836052
18	Միաձույլ ե/բետոնե աստիճանների պատրաստում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	4.00000	40.79662949		163.18651797
19	Ամրանի արժեքը ՓՑմմ A500c դասի	տն	0.11000	345.09265673		37.96019224
20	Ամրանային ցանցի արժեքը 5Ց1	տն	0.03400	505.48801593		17.18659254
21	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 40մմ հաստությամբ բազալտե սալերով	մ <sup>2</sup>	28.00000	14.67702277		410.95663756
22	B-15 դասի բետոնից պատերի պատրաստում	մ <sup>3</sup>	3.30000	42.10831950		138.95745434
23	Հենապատի բազալտե թասակի տեղադրում 400x80 մմ կտրվածքի	մ <sup>2</sup>	12.00000	38.69385119		464.32621431
24	Պատերի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քունկով	մ <sup>2</sup>	12.00000	0.63448597		7.61383158
25	Ավազակոպձային շերտի պատրաստում	մ <sup>3</sup>	0.07000	5.73071772		0.40115024
26	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	1.00000	1.24618158		1.24618158

27	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5մ հաստությամբ	մ <sup>2</sup>	1.00000	4.82417459	4.82417459
	<b>Ընդամենը</b>				<b>1406.03085832</b>
	<b>Աստիճան-2</b>				
28	4-րդ կարգի բնահողի վշակում ձեռքով	մ <sup>3</sup>	4.00000	3.60824479	14.43297915
29	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	1.10000	1.04527504	1.14980254
30	Ավելտորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	5.51000	2.81045511	15.48560763
31	B-12,5 դասի բետոնից նախապատրաստական շերտի պատրաստում	մ <sup>3</sup>	0.90000	32.10734421	28.89660979
32	Միաձույլ ե/բետոնե աստիճանների պատրաստում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	2.00000	40.79662949	81.59325898
33	Ամրանի արժեքը Փ8մմ A500c դասի	տն	0.05900	345.09265673	20.36046675
34	Ամրանային ցանցի արժեքը 5B1	տն	0.03000	505.48801593	15.16464048
35	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 40մմ հաստությամբ բազալտե սալերով	մ <sup>2</sup>	8.00000	14.67702277	117.41618216
36	B-15 դասի բետոնից պատերի պատրաստում	մ <sup>3</sup>	0.60000	42.10831950	25.26499170
37	Հենապատի բազալտե թասակի տեղադրում 400x80 մմ կտրվածքի	մ <sup>2</sup>	1.60000	38.69385119	61.91016191
38	Պատերի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քուլկով	մ <sup>2</sup>	3.00000	0.63448597	1.90345790
